ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 4

ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Ա.Հովսեփյանի մոտ կայացած խորհրդակցության

22.03.2019թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի անդամները, Լոռի Բերդ, Ազնվաձոր, Չորագյուղ, Դարպաս համայնքների ղեկավարներ, ծրագրերի պատասխանատուներ:

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. ՀՀ կառավարության 17.04.2014թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված Հավելված 21-ի՝ վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման կարգի պահանջներին համապատասխան նախորդ նիստից հետո ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների մասին տեղեկատվության ներկայացում:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Զաղինյան/

2. Գուգարքի տարածաշրջանի Չորագյուղ համայնքի կողմից իրականացվելիք «Թիվ 1 գերեզմանատան պատի վերանորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքներ» ծրագրի ներկայացում:

/Զեկ.՝ Չորագյուղ համայնքի ղեկավար Արշակ Ռամազյան/

3. Ստեփանավանի տարածաշրջանի Լոռի Բերդ համայնքի կողմից իրականացվելիք «Լոռի Բերդ համայնքի Հովնանաձոր բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և Ագարակ, Յաղդան, Կողես բնակավայրերի պուրակների բարեկարգում և կառուցում» ծրագրի ներկայացում:

/Զեկ.՝ Լոռի Բերդ համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյան/

4. Գուգարքի տարածաշրջանի Ազնվաձոր համայնքի կողմից իրականացվելիք «Գերեզմանների ցանկապատում և տարածքի բարեկարգման աշխատանքներ» ծրագրի ներկայացում:

/Զեկ.՝ Ազնվաձոր համայնքի ղեկավար Նարեկ Հովսեփյան/

5. Գուգարքի տարածաշրջանի Դարպաս համայնքի կողմից իրականացվելիք «Մանկապարտեզի խաղահրապարակի կառուցման և բարեկարգման աշխատանքներ» ծրագրի ներկայացում:

/Զեկ.՝ Դարպաս համայնքի ղեկավար Արմեն Ալոյան/

6. Այլ հարցեր:

Հանձնաժողովը ո ր ո շ ե ց՝

Հաստատել՝

1. Ազնվաձորի համայնքապետարանի կողմից ներկայացված «Գերեզմանների ցանկապատում և տարածքի բարեկարգման աշխատանքներ» ծրագիրը /իրականացման ժամկետը՝ 01.04.2019թ. – 29.06.2019թ./:
2. Ձորագյուղի համայնքապետարանի կողմից ներկայացված «Թիվ 1 գերեզմանատան պատի վերանորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքներ» ծրագիրը /իրականացման ժամկետը՝ 01.04.2019թ. – 31.05.2019թ./:
3. Դարպասի համայնքապետարանի կողմից ներկայացված «Մանկապարտեզի խաղահրապարակի կառուցման և բարեկարգման աշխատանքներ» ծրագիրը /իրականացման ժամկետը՝ 01.04.2019թ. – 28.06.2019թ./:
4. Լոռի Բերդ համայնքապետարանի կողմից ներկայացված «Լոռի Բերդ համայնքի Հովնանաձոր բնակավայրի գերեզմանատան ցանկապատում և Ագարակ, Յաղդան, Կողես բնակավայրերի պուրակների բարեկարգում և կառուցում» ծրագիրը /իրականացման ժամկետը՝ 01.04.2019թ. – 30.05.2019թ./:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. Լոռի Բերդ, Ազնվաձոր, Ձորագյուղ, Դարպաս համայնքների ղեկավարներին՝ համագործակցելով զբաղվածության տարածքային կենտրոնների հետ, աշխատանքներն իրականացնել ՀՀ կառավարության 17.04.2014թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան /հավելված 21/:

2. Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

ա/ Ներկայացնել ծրագրերի հաստատման մասին ՀՀ Լոռու մարզպետի որոշման նախագիծ;

բ/ Ծրագրերի հաստատման մասին ՀՀ Լոռու մարզպետի որոշումը տրամադրել Վանաձորի և Ստեփանավանի զբաղվածության տարածքային կենտրոնների տնօրեններին, ինչպես նաև Լոռի Բերդ, Ազնվաձոր, Ձորագյուղ, Դարպաս համայնքների ղեկավարներին:

3. Հանձնաժողովի նախագահի տեղակալ Արա Առաքելյանին՝

Կազմակերպել Ծրագրերի ընթացքի պարբերական վերահսկման աշխատանքները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՇԱԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Կազմեց՝ Հանձնաժողովի քարտուղար Վ.Ջաղինյանը /2-33-99/